մինչեւ ճապոնական կղզիներն էին հասել:

Մինչ այդ՝ ամբոխը աւելանում էր. բոլոր տների պատշգամբները ծածկւած էին մարդկային գլուխներով: Ահագին բազմութիւն էր եկել շրջակայ գիւղերից: Գեղջկուհիները զուգւել էին, զարդարւել, որ ետ չը մնան քաղքուհիներից: Ամեն կողմ կարծես գօտիների ցուցահանդէս լինէր. բոլորն էլ մրցում էին իրանց գօտիների կտորներով ու գեղեցկութեամբ:

Փողոցում տղայքը ծախում էին կայանալիք թափորի կոպիտ գոյներով նկարւած պատկերը: Իսկ թափորը ինքը ուշանում էր: Բոլորը լարւած ուշադրութեամբ նայում էին դէպի այն անկիւնը՝ որտեղից գալու էր:

Վերջապէս երեւաց առաջին կառքը վրան երկյարկանի մի շէնքով, գրեթէ մի տան մեծութեամբ: Վերեւի յարկում տեղաւորւած էին երաժիշտները ու նւագում էին անդադար իրանց տարօրինակ գործիքներով մեր քայլերգի նման մի ինչ-որ եղանակ: Գործիքը պարզապէս մի մետաղի պնակ էր, որի եզերքին խփում էին նոյնպէս մետաղի բարակ ձողերով, ու առաջացնում մի մեղմ ու արծաթի հնչիւն ունեցող ելեւէջ: Երաժիշտների առաջ կանգնած էր մի տղայ ճերմակեցրած դէմքով ու փայլուն թագը գլխին. ասացին, որ դա մի աստւածութիւն էր ներկայացնում:

Կառքը դանդաղ առաջ էր շարժւում. նրան քաշում էին երկար հաստ թոկերով մի քանի շարք մարդիկ: Տարօրինակ էր տեսնելը, թէ ինչպէս նրանք դանդաղ ու միակերպ կռանում ու ճիգ էին անում, բոլորն էլ շարքով պինդ կպած իրանց պարանին: Իսկ կառքի ներքեւի յարկում կանգնած էին երկու կառապան, լայն բացած հովհարները ձեռներին: Նրանք անդադար թեքւում էին մի աջ, մի ձախ, հովհարները ճօճելով օդի մէջ մերթ դանդաղ, մերթ արագ, եւ հետն էլ երգում էին